ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Խաչատրյան Ռոբերտ
Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան, Հայաստան
Մովսիսյան Տաթև
Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան, Հայաստան

Համառոտ ներածություն: Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի (ԵԲԿՏ) գրավչության բարձրացման գործում շարունակում են արդիական մնալ կրթության որակի ապահովմանն առնչվող հիմնախնդիրները, մասնավորապես ԵԲԿՏ անդամ երկրներում եվրոպական չափանիշներին համապատասխան որակի ներքին և արտաքին ապահովման գործընթացների իրականացումը՝ միևնույն ժամանակ հաշվի առնելով յուրաքանչյուր երկրի ազգային (պետական) մոտեցումները: Բոլոնիայի գործընթացի շրջանակներում որակի ապահովումն առանցքային կարևորություն ունեցող ուղղություններից է. այն միտված է խթանելու մասնագիտական որակավորումների փոխճանաչումն ու դյուրացնելու ակադեմիական շարժունությունը՝ այդպիսով նպատակ ունենալով համադրելի դարձնել ԵԲԿՏ անդամ երկրների բարձրագույն կրթության համակարգերը, բարձրացնել որակի ապահովման համակարգերի հաշվետվողականությունն ու թափանցիկությունը, արդյունավետությունն ու մրցունակությունը, ինչպես նաև ապահովել նշված համակարգերի ճանաչելիությունը:

Հաշվի առնելով բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգերի արդյունավետ գործառման և հետագա կատարելագործման հարցերում ԵԲԿՏ գործիքներից մեկի՝ Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական չափորոշիչների ու ուղենիշների (ՈԱԵՉՈՒ)[1] առանցքային դերակատարությունը՝ սույն հոդվածում ուսումնասիրվում են 2005 և 2015 թթ. ՈԱԵՉՈՒ առանձնահատկությունները, ՀՀ որակի ապահովման չափանիշների համադրելիությունը 2015 թ. ՈԱԵՉՈՒ-ին:

Բանալի բառեր: Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ), ԵԲԿՏ գործիքներ, ՈԱԵՉՈՒ, ՀՀ որակի ապահովման չափանիշներ և չափորոշիչներ, ինստիտուցիոնալ հավատարմագրում:

[1] Անգլերեն համարժեքը՝ Standards and Guidelines for Quality Assurance in the European Higher Education Area (ESG):

Հիմնախնդիրը: Հետազոտության հիմնախնդիրը ՀՀ որակի ապահովման չափանիշների և չափորոշիչների վերանայման, ինչպես նաև ՈԱԵՉՈՒ պահանջներին համապատասխան որակի ներքին ու արտաքին ապահովման գործընթացների հետևողական իրականացման անհրաժեշտությունն է:

Հիմնախնդրին առնչվող արդիական այլ հետազոտությունների և հրատարակությունների կարճ վերլուծություն: ՈԱԵՉՈՒ-ն կրթության որակի ապահովման չափորոշիչների, ուղենիշների[2] և ընթացակարգերի խորհրդատվական փաստաթուղթ է, որի նպատակն է ուղղորդել կրթության ոլորտի համապատասխան սուբյեկտներին (մասնագիտական կրթական հաստատություններին և որակի ապահովման գործակալություններին) ԵԲԿՏ անդամ երկրներում որակի ներքին ու արտաքին ապահովման համակարգերի ստեղծման, ներդրման, արդյունավետ գործառման, գնահատման և հետագա բարելավման հարցերում: Բացի ուղղորդող փաստաթուղթ լինելուց՝ ներկայումս որակի ապահովման գործակալությունների համար ՈԱԵՉՈՒ-ի կիրառումը պարտադիր պահանջ է Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիային (ENQA) անդամակցելու և Որակի ապահովման գործակալությունների եվրոպական գրանցամատյանում (EQAR) գրանցվելու համար՝ առավել թափանցիկ դարձնելու որակի ապահովման (հավատարմագրման) գործընթացները:

ՈԱԵՉՈՒ-ն ընդունվել է 2005 թ.՝ Բերգենում կայացած նախարարական գագաթնաժողովի ժամանակ, E4 խմբի[3] ներկայացրած առաջարկությունների հիման վրա՝ հետագայում դառնալով բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտում բազմաբովանդակ փոփոխությունների իրականացման առաջմղիչ գործոն:

---

[2] Որակի ապահովման համատեքստում չափորոշիչները պահանջների և/կամ պայմանների որոշակի ակնկալվող մակարդակներին վերաբերող ձևակերպումներ են, որոնց համեմատությամբ գնահատվում և ձեռք է բերվում մասնագիտական հաստատության կամ կրթական ծրագրի անհրաժեշտ որակը՝ հավատարմագրվելու կամ արտոնագիր ստանալու նպատակով [13, 89]: Ուղենիշները բացատրում են, թե ինչու են չափորոշիչները կարևոր, և նկարագրում են, թե ինչպես պետք է իրականացվեն պահանջները: Ուղենիշները սահմանում են որակի ապահովման գործընթացներում ներգրավված հիմնական դերակատարների համար հաշվի առնվող համապատասխան տիրույթի լավագույն փորձը [14]:

[3] E4 խմբի կազմում են Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիան (ENQA), Եվրոպական ուսանողական միությունը (ESU), Բարձրագույն կրթական հաստատությունների եվրոպական ասոցիացիան (EURASHE) և Համալսարանների եվրոպական ասոցիացիան (EUA):

Հարկ է նշել, որ ՈԱԵՉՈՒ-ն արտացոլում է Եվրոպական համալսարանների միության (ԵՀՄ) հիմնարար փաստաթղթերից մեկի՝ Գրացի հռչակագրի (2003 թ.) հիմնադրույթները: Վերջինիս համաձայն՝ որակի ապահովումը Բոլոնիայի գործընթացի թիրախային նպատակներից է, որի իրականացման հիմնական պատասխանատուները բարձրագույն ուսումնական հաստատություններն են [11, 9]: Հարկ է նշել, որ սույն ձևակերպմամբ վերահաստատվում է բուհերի՝ որպես ոլորտում առկա խնդիրներին նորարար լուծումներ առաջարկող, ինչպես նաև պետության, տնտեսության և այլ բնագավառների հետագա զարգացման ու կատարելագործման հարցերում էական նշանակություն ունեցող կառույցների կարևորությունը: Ուստի, որակի ապահովման գործընթացների հետևողական և շրջափուլային իրականացումը բուհերի համար պետք է լինի ռազմավարական առաջնահերթություն որակի ապահովման համակարգերի արդյունավետ գործառման և հետագա զարգացման համար:

Գրացի հռչակագրի դրույթների համաձայն՝ որակի ապահովման եվրոպական ուղղվածության նպատակը փոխվստահության խթանումն ու բուհերի գործունեության թափանցիկության բարելավումն է՝ միաժամանակ հարգելով յուրաքանչյուր երկրի պետական մոտեցումների և մասնագիտական ոլորտների բազմազանությունը [11, 9]: Այսինքն՝ որակի ապահովման գործընթացները, բարձրագույն կրթության տարբեր համակարգերի առանձնահատկություններով հանդերձ, պետք է հիմնված լինեն այնպիսի հիմնարար սկզբունքների վրա (օրինակ՝ փոխվստահություն, թափանցիկություն ու հաշվետվողականություն), որոնց կիրառմամբ հնարավոր կլինի մշտապես նպաստել բուհերի գործունեության շարունակական բարելավմանը, դրանց ինքնավարության ապահովմանը, բուհերում որակի մշակույթի ձևավորմանը, ամրապնդմանը, տարածմանն ու զարգացմանը և, ընդհանուր առմամբ, բուհերի միջազգայնացման գործընթացի հնարավոր դյուրացմանը:

Այսպիսով՝ ՈԱԵՉՈՒ-ն մշակվել է՝ հիմնվելով Բոլոնիայի գործընթացի անդամ երկրների ազգային (պետական) կրթության համակարգերի առաջնահերթությունների, այդ համակարգերում մասնագիտական կրթական հաստատությունների և որակի ապահովման գործակալությունների ինքնավարության կարևորության ու տարբեր մասնագիտությունների կրթական ծրագրերին ներկայացվող պահանջների տարբերությունների վրա [10], ինչը նշանակում է, որ որակի ապահովման եվրոպական չափորոշիչներն ու ուղենիշները կիրառելի են ԵԲԿՏ անդամ բոլոր երկրների բարձրագույն կրթության համակարգերում՝ անկախ կրթական հաստատությունների կազմակերպաիրավական ձևից, կա-

ռուցվածքից, գործունեությունից, ծավալից և ոլորտային առանձնահատկություններից։

2005-2012 թթ. ընկած ժամանակահատվածում հետևելով ԵԲԿՏ անդամ երկրների կրթական ոլորտում տեղի ունեցող դինամիկ զարգացումներին և բարձրագույն կրթության համակարգերի առջև ծառացած նոր մարտահրավերներին՝ նախարարական հերթական գագաթնաժողովի (2012 թ., Բուխարեստ) ժամանակ քննարկվեց ԵԲԿՏ-ում որակի ապահովման գործընթացների կատարելագործման հարցը։ Որակի ապահովման գործընթացներն առավել թիրախային դարձնելու նպատակով կարևորվեց բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական համակարգին ներկայացվող պահանջների վերանայումը, քանի որ որակի ապահովումն անհրաժեշտ էր ԵԲԿՏ-ում փոխվստահություն ձևավորելու և ԵԲԿՏ-ի գրավչության բարձրացման ուղղությամբ անդրսահմանային կրթության որակն ապահովելու համար [12]։ Հաշվի առնելով նշվածը՝ կրթության նախարարների հանձնարարությամբ 2012 թվականից մեկնարկեցին (Բուխարեստի կոմյունիկե) ՈԱԵՉՈՒ-ի վերանայման աշխատանքները, որի վերջնական տարբերակն ընդունվեց 2015 թ. Երևանում (Երևանի կոմյունիկե)՝ դառնալով բուհերի և որակի ապահովման գործակալությունների միջազգայնացման ու կրթության արդիականացման առանցքային գործիքներից մեկը։

Անդրադառնալով ՈԱԵՉՈՒ-ին ՀՀ որակի ապահովման չափանիշների և չափորոշիչների համապատասխանությանը և ՀՀ բարձրագույն կրթության համակարգում ՈԱԵՉՈՒ-ի կիրառմանը՝ պետք է նշել, որ ուսումնասիրության համաձայն՝ չափանիշներն ու չափորոշիչները տեսականորեն համադրելի են (բացառությամբ որակավորումների ճանաչմանը վերաբերող չափանիշների)։ Այդուհանդերձ, ոլորտային վերլուծությունների ուսումնասիրության արդյունքները [1], [3, 22], [4], [7] փաստում են, որ որակի ներքին ու արտաքին ապահովման գործընթացները գործնականում լիովին չեն իրականացվում 2015 թ. ՈԱԵՉՈՒ-ին համապատասխան, ինչը հավանաբար պայմանավորված է նրանով, որ ՀՀ որակի ապահովման չափանիշներն ու չափորոշիչները մշակվել ու հաստատվել են 2005 թ. ՈԱԵՉՈՒ-ի հիման վրա և 2011 թվականից մինչ օրս չեն վերանայվել։ Ուստի, այս համատեքստում կարևորվում են ՀՀ որակի ապահովման չափանիշների և չափորոշիչների վերանայման անհրաժեշտությունն ու որակի ապահովման գործընթացների համապատասխանությունը 2015 թ. ՈԱԵՉՈՒ-ի պահանջներին՝ հաշվի առնելով նաև ազգային և եվրոպական մակարդակներում տեղի ունեցող վերջին զարգացումները։

Հոդվածի նպատակը: Մեր ուսումնասիրության նպատակն է մասնագիտական գրականության ու ոլորտային հիմնարար փաստաթղթերի վերլուծության հիման վրա ներկայացնել ՈԱԵՉՈՒ-ի և ՀՀ որակի ապահովման չափանիշների ու չափորոշիչների համադրման առանձնահատկությունները ՀՀ բարձրագույն կրթության համակարգում:

Գիտական նորույթը: Նորովի լուսաբանվել է ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգի բարելավման անհրաժեշտությունը ոլորտի միջազգայնացման և ԵԲԿՏ-ին ինտեգրման գործընթացների տեսանկյուններից:

Ուսումնասիրելով և համեմատելով 2005 և 2015 թթ. ՈԱԵՉՈՒ-ները [10], [14]՝ հարկ է ընդգծել, որ ՈԱԵՉՈՒ-ի վերանայված տարբերակով առավել արժևորվել և վերաիմաստավորվել է բարձրագույն կրթությունը. գործող չափանիշները (պահանջները/չափորոշիչները) առաջարկում են մասնագիտական կրթական հաստատություններին որդեգրել և կիրառել բարձրագույն կրթության բովանդակության արդիականացմանը միտված նոր մոտեցումներ, ինչպիսիք են՝

- ուսանողակենտրոն ուսուցումը,
- մասնագիտական որակավորումների փոխճանաչումը,
- որակի ապահովման գործընթացների շարունակական կատարելագործումը,
- վերջնարդյունքահենք կրթական ծրագրերի համապատասխանությունը ԵԲԿՏ որակավորումների շրջանակին (ԵԲԿՏ ՈՇ), Որակավորումների եվրոպական շրջանակին (ՈԵՇ), իսկ պետական մակարդակում՝ Որակավորումների ազգային շրջանակին (ՈԱՇ),
- բարձրագույն կրթության համակարգերի բազմազանությունը,
- հետազոտության և ուսումնական գործընթացների փոխկապվածությունը,
- դասավանդման, ուսումնառության և գնահատման ժամանակակից մեթոդների կիրառումը,
- որակի ապահովման տեսանկյունից խրախուսման հստակ մեխանիզմների միջոցով պրոֆեսորադասախոսական կազմի (ՊԴ կազմ) կատարելագործմանն ուղղված միջոցառումների կազմակերպումն ու իրականացումը,
- ուսումնական գործընթացների արդյունավետ կազմակերպման նպատակով մարդկային, ֆինանսական, նյութական, կրթական համապատասխան և այլն ռեսուրսներով ապահովվածությունը,

- ուսամնառողներին խորհրդատվական և օժանդակման լրացուցիչ ծառայությունների տրամադրումը,
- ուսումնառողների առաջընթացին նպաստող միջոցառումների կազմակերպումը և իրականացումը,
- որակի ապահովման գործընթացներում կրթության ոլորտի առանցքային շահակիցների ներգրավման անհրաժեշտությունը,
- որակի ապահովման գործակալությունների անկախ գործելառճի խրախուսումը,
- կրթական հաստատությունների և որակի ապահովման գործակալությունների հաշվետվողականության և թափանցիկության բարձրացումը:

Ի լրումն վերոնշյալի՝ 2015 թ. ընդունված ՈԱԵՉՈՒ-ում առավել հստակեցվել են չափորոշիչների և ուղենիշների նպատակները: 2005 թ. ՈԱԵՉՈՒ-ում կարևորվում էին բուհերի զարգացման խրախուսումը, որակի մշակույթի ձևավորման հարցում բուհերին և որակի ապահովման գործակալություններին ուղղորդումը, բարձրագույն կրթության գործընթացների և դրանց արդյունքների մասին բուհերի շահակիցներին իրազեկումը, ինչպես նաև ԵԲԿՏ-ում բարձրագույն կրթության որակի ապահովման միասնական շրջանակի ստեղծումը [10]: Վերանայված տարբերակում գերակա նպատակներ են սահմանվել.

ա) եվրոպական, ազգային և ինստիտուցիոնալ մակարդակներում որակի ապահովման համակարգերի համար միասնական շրջանակի մշակումը,

բ) ԵԲԿՏ-ում բարձրագույն կրթության որակի բարելավման ապահովումը,

գ) փոխադարձ վստահության խթանումը՝ ազգային ու միջազգային մակարդակներում որակավորումների ճանաչման և շարժունության նպատակով,

դ) ԵԲԿՏ-ում որակի ապահովման գործընթացների վերաբերյալ տեղեկության տրամադրումը [14]:

Կրթական բարեփոխումներով պայմանավորված՝ վերանայված ՈԱԵՉՈՒ-ն հիմնվում է ԵԲԿՏ-ում բարձրագույն կրթության որակի ներքին և արտաքին ապահովման չորս հիմնարար սկզբունքների վրա: Դրանք են.

1. բարձրագույն ուսումնական հաստատությունները պատասխանատու են իրենց մատուցած ծառայությունների որակի համար,
2. որակի ապահովումն արձագանքում է բարձրագույն կրթության համակարգերի, բուհերի, կրթական ծրագրերի և ուսանողների բազմազանությանը,
3. որակի ապահովումը խրախուսում է որակի մշակույթի զարգացումը,

4. որակի ապահովումը հաշվի է առնում ուսումնառողների, բոլոր շահակիցների և հասարակության պահանջմունքներն ու սպասելիքները [15, 81]:

ՈԱԵՉՈՒ-ն բաղկացած է *երեք կառուցամասերից,* որոնք փոխկապակցված են և կազմում են ԵԲԿՏ անդամ երկրների որակի ապահովման շրջանակների հենքը:

1. ***Չափորոշիչներ և ուղենիշներ՝ որակի ներքին ապահովման համար,*** որոնց շրջանակում ուսումնասիրվում են՝ ա) մասնագիտական կրթական հաստատության որդեգրած որակի ապահովման ռազմավարությունները, քաղաքականությունները, վերջիններիս համահունչ իրականացվող փոխկապակցված գործընթացները, ինչպես նաև այդ գործընթացներում հաստատության առանցքային շահակիցների ներգրավվածությունը, բ) ԵԲԿՏ որակավորումների շրջանակին (ԵԲԿՏ ՈՇ), Որակավորումների եվրոպական շրջանակին (ՈԵՇ), իսկ պետական մակարդակում՝ Որակավորումների ազգային շրջանակին (ՈԱՇ) համապատասխան վերջնարդյունքահենք կրթական ծրագրերի պլանավորման, մշակման, հաստատման, շարունակական մշտադիտարկման և բարելավման աշխատանքները, գ) կրթական հաստատությունում ուսանողակենտրոն ուսուցումը խթանող դասավանդման (ուսուցման), ուսումնառության մեթոդների կիրառման արդյունավետությունը և գնահատման համակարգի օբյեկտիվ գործառման հնարավորությունները, դ) ուսումնառողների ընդունելության, ակադեմիական առաջընթացի, մասնագիտական որակավորումների ճանաչման և հավաստման գործընթացները, ե) ՊԴ կազմի մասնագիտական զարգացման և շարունակական կատարելագործմանն ուղղված միջոցառումների հնարավորությունները, զ) կրթական ծրագրերի իրականացման նպատակով հատկացված ֆինանսական, մարդկային, նյութական, կրթական համապատասխան և այլ ռեսուրսների բաշխումն ու կիրառումը, է) ուսումնառողներին տրամադրվող խորհրդատվական ու ուղղորդման լրացուցիչ աշխատանքների հետևողական իրականացումը՝ ըստ ուսանողական համակազմի (առկա և հեռակա ուսուցման համակարգերում սովորողներ, օտարերկրյա և հատուկ պայմանների կարիք ունեցող ուսումնառողներ) թիրախային կարիքների, ը) կրթական հաստատությունում տեղեկությունների հավաքագրման, վերլուծման, կիրառման ու փաստաթղթավորման գործընթացների կառավարումը և դրանց արդյունքների վերաբերյալ հավաստի, հասանելի և թարմ տեղեկատվության տրամադրումը, թ) կրթական հաստատությունում որակի ներքին ապահովման համակարգի արդյունավետ գործառումը:

2. ***Չափորոշիչներ և ուղենիշներ՝ որակի արտաքին ապահովման համար,*** որոնց ուղղորդմամբ հստակեցվում են որակի արտաքին ապահովման (հավատարմագրման)[4] գործընթացների իրականացման շրջանակները, մասնավորապես հավատարմագրման գործընթացների նպատակները, խնդիրները, վերջնարդյունքները, հավատարմագրման գործընթացներ իրականացնելու նպատակով անհրաժեշտ փաստաթղթային հենքը (օրինակ՝ օրենքներ, կարգեր, ուղեցույցներ), արտաքին գնահատման մոտեցումները, հավատարմագրման գործընթացների արժեքները, ինչպես նաև գործընթացներին առնչվող այլ հարցեր՝ հիմնված բարձրագույն կրթության ոլորտի տարբեր շահակիցների համատեղ կարծիքների ու ակնկալիքների վրա:

3. ***Չափորոշիչներ և ուղենիշներ՝ որակի արտաքին ապահովման գործակալությունների համար,*** որոնցով միջազգային փորձագետներից բաղկացած աշխատանքային խմբերը գնահատում են որակի ապահովման գործակալությունների գործունեությունը, մասնավորապես՝ ա) որակի ապահովման գործընթացների իրականացման համապատասխանությունը գործակալությունների սահմանած փաստաթղթերին, բ) պետության կողմից որակի ապահովման գործակալությունների պաշտոնապես ճանաչումը, գ) որակի ապահովման գործակալությունների անկախ գործելառճը, դ) որակի ապահովման (հավատարմագրման) գործընթացների արդյունավետությունը, այդ թվում՝ ազգային ու միջազգային համատեքստերում որակի ապահովման քաղաքականությունների և փոխկապակցված գործընթացների բարելավման նպատակով իրականացված ոլորտային վերլուծությունները, ե) գործակալությունների աշխատանքն արդյունավետ իրականացնելու նպատակով հատկացված ֆինանսական, մարդկային ու նյութական ռեսուրսները, զ) գործակալությունների որակի ներքին ապահովման համակարգի գործառման փաստացի իրավիճակն ու համակարգի շարունակական բարելավմանն ուղղված միջոցառումները:

Հաշվի առնելով այն, որ ՈԱԵՉՈՒ-ն ԵԲԿՏ անդամ երկրներում որակի ապահովման ազգային համակարգեր ձևավորելու նպատակով պաշտոնական փաստաթուղթ է, սույն հոդվածի շրջանակում ուսումնասիրվել են ՀՀ որակի ապահովման չափանիշները դրանց նպատակի, կիրառելիության ու ՈԱԵՉՈՒ-ին համադրելիության տեսանկյուններից:

---

[4] *Հավատարմագրումը* բարձրագույն կրթության որակի բարելավման մեխանիզմ է և հավաստում է կրթական հաստատության առանցքային շահակիցներին (բուհի ուսանողներին, աշխատակազմին, գործատուներին, հանրությանը), որ մատուցվող կրթությունն արժանահավատ է, իսկ կրթության որակը՝ ճանաչելի պետության կողմից [2, 143]:

ՀՀ որակի ապահովման չափանիշներ և չափորոշիչներ[5]

ՀՀ-ում որակի ապահովման չափանիշների և չափորոշիչների մշակման լիազոր մարմինը «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամն է (ՈԱԱԿ): ՈԱԱԿ-ի մշակած որակի ապահովման չափանիշներն ու չափորոշիչները հաստատվել են ՀՀ կառավարության 2011 թ. հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ[6] և գործում են մինչև օրս: ՀՀ որակի ապահովման չափանիշների և չափորոշիչների նպատակն է աջակցել մասնագիտական կրթական հաստատություններին՝ ստեղծելու ՀՀ օրենսդրությանն ու ՈԱԵՉՈՒ-ին համապատասխան որակի ներքին ապահովման համակարգեր [9, 22]: ՀՀ որակի ապահովման չափանիշները հնարավորություն են տալիս մասնագիտական կրթական հաստատություններին ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում իրականացնելու ինքնավերլուծություններ և բացահայտելու հաստատության և/կամ նրա առանձին կրթական ծրագրերի խնդիրները, խոչընդոտներն ու հետագայում բարելավման կարիք ունեցող տիրույթները:

Հաշվի առնելով ՀՀ կառավարության և կրթության ոլորտի առանցքային սուբյեկտների[7]՝ բարձրագույն կրթության համակարգի միջազգայնացմանն ուղղված ջանքերը, մասնավորապես միջազգային չափանիշներին համապատասխան որակի ապահովման գործընթացների իրականացումը՝ սույն հոդվածում ուսումնասիրվել է ՀՀ որակի ապահովման (հավատարմագրման) չափանիշների համադրելիությունը ՈԱԵՉՈՒ-ին և դրանց ազդեցությունը ՀՀ որակի ապահովման համակարգի վրա (տե՛ս Աղյուսակ 1):

---

[5] ՀՀ որակի ապահովման համատեքստում *չափանիշները* հատուկ առանձնացված ձևակերպումներ են, որոնք վերստուգելի տերմիններով սահմանում են հաստատության գործունեության կամ իրականացվող կրթական ծրագրերի բնութագրերը: *Չափորոշիչները* ձևակերպումներ են, որոնք սահմանում են յուրաքանչյուր չափանիշին համապատասխանելու չափը անաչառ գնահատելու համար անհրաժեշտ պայմանները [8, 28]:

[6] ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին, ՀՀ կառավարության որոշում, 30.05.2011 թ., N 959-Ն՝ https://www.arlis.am/documentview.aspx?docID=-69860:

[8] Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (ԿԳՄՍ), Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն (ՈԱԱԿ), Մասնագիտական ուսումնական հաստատություններ, Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն (ԱՓՇՏԱԿ):

Աղյուսակ 1.

ՀՀ որակի ապահովման (հավատարմագրման) չափանիշների համադրումը ՈԱԵՉՈՒ-ին, Մաս 1-ին

ՈԱԵՉՈՒ Մաս 1 Որակի ներքին ապահովում	**ՀՀ որակի ապահովման չափանիշներ և չափորոշիչներ**	
	Ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշներ և չափորոշիչներ	**Ծրագրային հավատարմագրման չափանիշներ և չափորոշիչներ**
1.1 Որակի ապահովման քաղաքականություն և գործընթացներ	1. Առաքելությունը և նպատակը (1.1, 1.2, 1.3) 2. Կառավարումը և վարչարարությունը (2.1, 2.2, 2.3) 4. Ուսանողներ (4.8) 5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ (5.7) 7. Ենթակառուցվածքը և ռեսուրսները (7.7) 10. Որակի ներքին ապահովում (10.1, 10.2, 10.3, 10.4)	7. Որակի ապահովումը (7.1, 7.2, 7.4) 3. Դասավանդումը և ուսումնառությունը (3.3)
1.2 Կրթական ծրագրերի մշակում և հաստատում	3. Մասնագիտությունների կրթական ծրագրեր (3.1, 3.2, 3.3, 3.4) 6. Հետազոտությունը և զարգացումը (6.5)	1. Մասնագիտության կրթական ծրագիրը (1.1, 1.2, 1.3, 1.4, 1.5, 1.6, 1.7) 5. Հետազոտական և ստեղծագործական գործունեությունը (5.1, 5.2, 5.3, 5.4)
1.3 Ուսանողակենտրոն ուսումնառություն, ուսուցում և գնահատում	3. Մասնագիտությունների կրթական ծրագրերը (3.2, 3.3) 4. Ուսանողները (4.2, 4.6)	3. Դասավանդումը և ուսումնառությունը (3.1, 3.2) 4.Ուսանողների գնահատումը (4.1, 4.2, 4.3, 4.4, 4.5)
1.4 Ուսանողների ընդունելություն, առաջադիմություն, ճանաչում և հավաստագրում	4. Ուսանողները (4.1, 4.2, 4.5, 4.6) 3. Մասնագիտությունների կրթական ծրագրերը (3.4) Ճանաչման և հավաստման գործընթացներն առանձին չափանիշներով/չափորոշիչներով սահմանված չեն	1. Մասնագիտության կրթական ծրագիրը (1.5) Ճանաչման և հավաստման գործընթացներն առանձին չափանիշներով/չափորոշիչներով սահմանված չեն
1.5 Դասախոսական կազմ	5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը (5.1, 5.2, 5.3, 5.4, 5.5, 5.6)	2. Դասախոսական կազմը (2.1, 2.2, 2.3, 2.4)
1.6 Ուսումնառության ռեսուրսներ և ուսանողներին աջակցություն	2. Կառավարումը և վարչարարությունը (2.1) 4. Ուսանողները (4.2, 4.3,	6. Կրթական միջավայրը (6.1, 6.2, 6.3)

	4.4, 4.5, 4.7) 7. Ենթակառուցվածքները և ռեսուրսները (7.1, 7.2, 7.3, 7.4, 7.6)	
1.7 Տեղեկատվության կառավարում	2. Կառավարումը և վարչարարությունը (2.4, 2.6, 2.7) 3. Մասնագիտությունների կրթական ծրագրեր (3.5) 4. Ուսանողները (4.2, 4.8) 5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ (5.3) 7. Ենթակառուցվածքը և ռեսուրսները (7.5, 7.7) 8. Հասարակական պատասխանատվությունը (8.3) 10. Որակի ներքին ապահովման համակարգը (10.5, 10.6)	2. Դասախոսական կազմը (2.2) 3. Դասավանդումը և ուսումնառությունը (3.3) 7. Որակի ապահովումը (7.1, 7.3, 7.5)
1.8 Հանրային տեղեկատվություն	8. Հասարակական պատասխանատվությունը (8.1, 8.2, 8.3, 8.4) 10. Որակի ներքին ապահովման համակարգը (10.6)	-
1.9 Կրթական ծրագրերի շարունակական մշտադիտարկում և պարբերական վերանայում	3. Մասնագիտությունների կրթական ծրագրերը (3.4) 4. Ուսանողներ (4.2)	1. Մասնագիտության կրթական ծրագիրը (1.5, 1.6, 1.7)
1.10 Շրջափուլային որակի արտաքին ապահովում	10. Որակի ներքին ապահովման համակարգը (10.5, 10.6)	-

Աղյուսակ 1-ից կարելի է ենթադրել, որ ՀՀ որակի ապահովման չափանիշները հիմնականում համադրելի են ՈԱԵՉՈՒ-ին, հետևաբար նշված չափանիշներով իրականացված հավատարմագրման գործընթացները նպատակաուղղված են ՀՀ մասնագիտական կրթական հաստատություններում մշակված փաստաթղթերով գործընթացների հետևողական իրականացմանը, կրթական հաստատությունների հաշվետվողականության և թափանցիկության ապահովմանը, որակի ապահովման մշակույթի ձևավորմանը, ազգային և միջազգային մակարդակներում կրթական հաստատությունների միջև համա-

գործակցության ամրապնդմանը և այլն: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ ՀՀ բուհերի միջազգայնացման տեսանկյունից գործող չափանիշները և չափորոշիչները գործնականում լիովին չեն արտացոլում դրույթներ և/կամ պահանջներ, օրինակ՝ ՀՀ բուհերում ԵԲԿՏ գործիքների (Որակավորումների ազգային շրջանակ (ՈԱՇ), եվրոպական նմուշի դիպլոմի հավելված, Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգ (ԿՓԵՀ), Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ (ՈԱԵՉՈՒ)) համակարգային կիրառման վերաբերյալ, մինչդեռ ներկայումս եվրոպական մակարդակում իրականացվող որակի ապահովման գործընթացներում խիստ կարևորություն է տրվում կրթական հաստատություններում վերոնշյալ գործիքների արդյունավետ կիրառմանը, քանի որ դրանք նպաստում են ԵԲԿՏ-ում ակադեմիական շարժունության ընդլայնմանը, որակավորումների փոխճանաչմանը, ինչպես նաև կրթության համակարգի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացմանը:

Սույն հետազոտության շրջանակում մի շարք փաստաթղթերի (օրինակ՝ տարբեր տարիների ոլորտային վերլուծություններ, գիտական հոդվածներ, հավատարմագրված բուհերի ինքնավերլուծություններ և ինստիտուցիոնալ հավատարմագրման զեկույցներ [1], [3, 22], [4], [5], [7]) ուսումնասիրության արդյունքում վեր հանված խնդիրները (բուհերի ինքնավարության և կրթական գործընթացների հաշվետվողականության ու թափանցիկության բարձրացման, որակավորումների փոխճանաչման, ակադեմիական շարժունության ընդլայնման, որակի ապահովման գործընթացների իրականացման և հետագա կատարելագործման, շնորհվող որակավորումների արժանահավատության, բուհերի գործունեության ցուցանիշների չափելիության ապահովման, կրթական վերջնարդյունքների՝ ՀՀ ՈԱՇ-ԵԲԿՏ ՈՇՈԵՇ բնութագրիչների ոչ լիարժեք համաձայնեցման և համապատասխանության, ԿՓԵՀ-ի և եվրոպական նմուշի դիպլոմի հավելվածի անարդյունավետ կիրառման և այլն) փաստում են, որ 2015 թ. ՈԱԵՉՈՒ-ին համապատասխան որակի ապահովման գործընթացների իրականացումը դեռևս շարունակում է մնալ ՀՀ բարձրագույն կրթության համակարգի հիմնական մարտահրավերներից մեկը:

Բացի այդ, քանի որ 2015 թվականից ՈԱԱԿ-ն ընդլայնել է իր գործունեության շրջանակը՝ հավատարմագրման ենթակա կրթական հաստատությունների ցանկում ներառելով նաև հատուկ ոլորտների (օրինակ՝ ռազմական, ոստիկանական, արտակարգ իրավիճակների, բժշկական, մշակութային) մասնագիտական կրթական հաստատություններին, անհրաժեշտություն է առաջանում հավատարմագրման գործող չափանիշների հիման վրա մշակելու նշված

ոլորտներին հատուկ չափանիշներ, որոնց պահանջները հնարավորություն կտան անաչառ գնահատելու նմանատիպ կրթական հաստատությունների գործունեությունը՝ հաշվի առնելով այդ հաստատությունների կառավարման և դրանց կրթական ծրագրերի ոլորտային առանձնահատկությունները:

Հարկ է նաև նշել, որ սույն հոդվածում ներկայացված կրթական խնդիրների հաղթահարման հարցում առանցքային դերակատարություն ունեն ՀՀ կառավարությունը և վերջինիս կողմից իրականացվող միջոցառումները: Թեպետ 2019 թ. ՀՀ կառավարության ծրագրի [5] «Կրթություն և գիտություն» բաժնում առանձին ներկայացվում են ՀՀ բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումների հիմնական ուղղությունները, ուշագրավ է, որ ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույցում [6, 22] արձանագրված չէ որևէ դրույթ՝ կապված նշված ուղղություններով աշխատանքների կատարման այն արդյունքների մասին, որոնք լիովին միտված կլինեն ՀՀ-ում բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացների բարելավմանը: Ծրագրում միայն նշված է, որ հաշվետու տարում «մոտ 10 %-ով ավելացել է ներգնա շարժունության ցուցանիշը, ստեղծվել է Բարձրագույն կրթության միջազգայնացման ազգային հարթակը՝ Studyinarmenia.am, ու մշակվել են միջազգայնացման ցուցիչները և գործիքակազմը» [6, 22]:

ՀՀ որակի ապահովման չափանիշների/չափորոշիչների վերանայման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ՀՀ բուհերի մեծ մասն արդեն անցում է կատարել հավատարմագրման 2-րդ շրջափուլ: 1-ին և 2-րդ փուլերում հավատարմագրված նույն բուհերի ինքնավերլուծությունների և փորձագիտական զեկույցների համեմատական ուսումնասիրության արդյունքները ևս վկայում են, որ գործող չափանիշները/չափորոշիչները և արտաքին գնահատման մեթոդաբանությունը թույլ չեն տալիս լիարժեք բացահայտել մասնագիտական կրթական հաստատությունների ոլորտային առանձնահատկությունները և դրանց կրթական ծրագրերի ուժեղ ու թույլ կողմերը:

Եզրակացություն: Ամփոփելով վերլուծության արդյունքները՝ հարկ է նշել, որ սույն հոդվածում ներկայացված խնդիրների հաղթահարման համատեքստում առավել քան երբևէ կարևորվում է խորքային վերլուծությունների հիման վրա պետական և ինստիտուցիոնալ մակարդակներում որդեգրած քաղաքականությունների, ռազմավարությունների, հատկապես ՀՀ որակի ապահովման չափանիշների/չափորոշիչների վերանայման անհրաժեշտությունը: Նշվածը բացատրվում է նրանով, որ ՀՀ որակի ապահովման չափանիշները/չափորոշիչներն իրենց նպատակին չեն ծառայում, ինչպես նաև չեն համապատասխանում

2015 թ. ՈԱԵՉՈՒ-ի նպատակներին ու չեն արտացոլում որակի ապահովման ոլորտի ներկայիս զարգացումները: Ինչպես արդեն նշվել է, գործող չափանիշ-ների/չափորոշիչների հիմնական նպատակը որակի ապահովման համակարգ ներդնելու ուղղությամբ բուհերին ուղղորդելն է, մինչդեռ ներկայումս ՀՀ բուհե-րը գտնվում են որակի ներքին ապահովման համակարգերի զարգացման և որակի մշակույթի ամրապնդման փուլերում: Այսինքն՝ գործող որակի ապա-հովման չափանիշներն ու չափորոշիչներն իրականում չեն արտացոլում ՀՀ որակի ապահովման համակարգի զարգացմանը միտված հստակ պահանջներ՝ այդպիսով խոչընդոտելով նաև ոլորտի միջազգայնացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բուդաղյան Ա., Սարգսյան Յու., Հայաստանի բարձրագույն կրթության բարե-փոխումների առկա վիճակը և հեռանկարները Բոլոնիայի գործընթացի համատեքս-տում. Զեկույց, Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազ-գային կենտրոն, Երևան, «Փրինթինֆո», 2012:
2. Խաչատրյան Ռ., Մովսիսյան Տ., Բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգ. հավատարմագրումը որպես որակի արտաքին ապահովման մեխանիզմ, «Բանբեր», 2(51), Երևան, «Լինգվա», 2020, էջ 143:
3. Խաչատրյան Ռ., Մովսիսյան Տ., ՀՀ բուհերի ինստիտուցիոնալ հավատարմա-գրման հիմնախնդիրները ԵԲԿՏ-ին ինտեգրման համատեքստում, «Կրթությունը 21-րդ դարում», 1(3), Երևան, 2020, էջ 22:
4. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, Արցախի պետա-կան համալսարան, Բարձրագույն կրթություն. հիմնախնդիրներ և հեռանկարներ. Աշ-խատաժողովի նյութեր, Երևան, «Տնտեսագետ» հրատարակչություն, 2017:
5. ՀՀ կառավարության ծրագիրը հաստատելու մասին որոշում, (08.02.2019), N 65 – Ա: https://www.gov.am/files/docs/3133.pdf:
6. ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հավա-նության արժանացած՝ ՀՀ կառավարության ծրագրի 2019 թվականի կատարման ըն-թացքի և արդյունքների մասին զեկույց, 2020, էջ 22: https://www.gov.am/files/docs/-3932.pdf:
7. Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն, ՀՀ բու-հերի համակարգային խնդիրները. հավատարմագրում անցած ՄՈՒՀ-երի փորձագի-տական զեկույցների համեմատական վերլուծություն, Երևան, 2018:
8. Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն, ՀՀ մաս-նագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկ, Երևան, 2015, էջ 28:
9. Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն, ՀՀ մասնագիտական կրթության համակարգում որակի ապահովման ուղենիշներ, չափա-նիշներ և չափորոշիչներ (աշխատանքային նյութեր), Երևան, 2010, էջ 22:
10. European Association for Quality Assurance in Higher Education. ENQA report on Standards and Guidelines for Quality Assurance in the European Higher Education Area. Helsinki, 3rd edition, 2009.
11. European University Association. Graz Declaration 2003 Forward from Berlin: the Role of the Universities, 2003, p. 9.

12. Making the Most of Our Potential: Consolidating the European Higher Education Area: Bucharest Communiqué, 2012.

13. United Nations Educational, Scientific and Cultural Organization (UNESCO). Quality Assurance and Accreditation: A Glossary of Basic Terms and Definitions. 1st edit. Bucharest, 2007, p. 89.

14. Standards and Guidelines for Quality Assurance in the European Higher Education Area (ESG), Belgium, 2015.

15. Бутакова М. М., Соколова О. Н., Кузнецова О. В., Менеджмент в организациях профессионального образования: учебное пособие. Москва: КноРус, 2019, с. 81.

ОСОБЕННОСТИ СОЧЕТАНИЯ НАЦИОНАЛЬНЫХ И ЕВРОПЕЙСКИХ КРИТЕРИИ ОБЕСПЕЧЕНИЯ КАЧЕСТВА В СИСТЕМЕ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ РА

Хачатрян Роберт

Государственный университет им. В. Брюсова, Армения

Мовсисян Татев

Государственный университет им. В. Брюсова, Армения

Аннотация

В статье представлены особенности Стандартов и рекомендаций по обеспечению качества высшего образования, сопоставимость стандартов обеспечения качества Республики Армения с ESG 2015, а также проблемы применения этих стандартов в системе высшего образования РА. Для решения проблем, представленных в статье, необходимо пересмотреть политику и стратегии, принятые на государственном и институциональном уровнях, особенно стандарты и критерии обеспечения качества Республики Армения с учетом развития, происходящего в государственной и международной образовательной сферах.

Ключевые слова: Европейское пространство высшего образования (ЕПВО), инструменты ЕПВО, критерии и стандарты обеспечения качества, институциональная аккредитация.

Список использованной литературы

1. Будагян А., Саргсян Ю., Текущее состояние и перспективы реформ высшего образования в Армении в контексте Болонского процесса: Доклад. Национальный центр стратегических исследований высшего образования, Ереван, Принтинфо, 2012.

2. Хачатрян Р., Мовсисян Т., Система обеспечения качества высшего образования: аккредитация как механизм внешнего обеспечения качества, Вестник 2 (51), Ереван, Лингва, 2020, с. 143.

3. Хачатрян Р., Мовсисян Т., Проблемы институциональной аккредитации вузов РА в контексте интеграции в ЕПВО, «Образование в XXI веке» 1 (3), Ереван, 2020, с. 22.

4. Армянский государственный экономический университет, Арцахский государственный университет, Материалы семинара «Высшее образование. Проблемы и перспективы», Ереван, Изд-во «Тнтесагет», 2017.

5. Постановление об утверждении программы Правительства РА (08.02.2019), N 65 – A, https://www.gov.am/files/docs/3133.pdf.

6. Отчет об итогах реализации программы Правительства РА на 2019 г., 2020, с. 22, https://www.gov.am/files/docs/3932.pdf.

7. Национальный центр обеспечения качества профессионального образования, Системные проблемы вузов РА. Сравнительный анализ экспертных докладов профессиональных учебных заведений, прошедших аккредитацию, Ереван, 2018.

8. Национальный центр обеспечения качества профессионального образования, Пособие по экспертизе профессионального образования РА, Ереван, 2015, с. 28.

9. Национальный центр обеспечения качества профессионального образования, Рекомендации, стандарты и критерии обеспечения качества в системе профессионального образования РА (рабочие материалы), Ереван, 2010, с. 20.

10. Европейская ассоциация обеспечения качества высшего образования. Стандарты и рекомендации для гарантии качества в Европейском пространстве высшего образования, Хельсинки, 3-е изд., 2009.

11. Ассоциация европейских университетов, Грацкая декларация 2003, Вперед из Берлина: роль университетов, 2003, с. 9.

12. Максимальное использование нашего потенциала: консолидация Европейского пространства высшего образования: Бухарестское Коммюнике, 2012.

13. Организация Объединенных Наций по вопросам образования, науки и культуры (ЮНЕСКО). Обеспечение качества и аккредитация: Словарь основных терминов и определений. 1-е ред., Бухарест, 2007, с. 89.

14. Стандарты и рекомендации для гарантии качества в Европейском пространстве высшего образования (ESG), Бельгия, 2015.

15. Бутакова М. М, Соколова О. Н., Кузнецова О. В., Менеджмент в организациях профессионального образования: учебное пособие. Москва: КноРус, 2019, с. 81.

PECULIARITIES OF ALIGNING THE NATIONAL AND EUROPEAN CRITERIA OF QUALITY ASSURANCE IN THE HIGHER EDUCATION SYSTEM OF THE RA

Khachatryan Robert
Brusov State University, Armenia
Movsisyan Tatev
Brusov State University, Armenia

Summary

The article presents the features of the Standards and Guidelines for Quality Assurance in the European Higher Education Area (ESG), the alignment of the quality assurance standards of the RA with those of ESG 2015, as well as the problems of applying those standards in the higher education system of the RA. To overcome the problems presented in the article, the need to review the policies and strategies adopted at the state and institutional levels, especially the criteria and standards for quality assurance of the Republic of Armenia, is emphasized while taking into account the development taking place in the state and international educational spheres.

Keywords: European Higher Education Area (EHEA), EHEA tools, criteria and standards of quality assurance, institutional accreditation.

References:

1. Budaghyan A., Sargsyan Y. The Current State and Perspectives of Higher Education Reforms of Armenia in the Context of the Bologna Process: Report. National Center for Strategic Research in Higher Education, Yerevan, Printinfo, 2012.

2. Khachatryan R., Movsisyan T. Higher Education Quality Assurance System: Accreditation As a Mechanism for External Quality Assurance. Bulletin 2(51), Yerevan, Lingua, 2020, p. 143.

3. Khachatryan R., Movsisyan T. Problems of the Institutional Accreditation of Higher Education Institutions of the RA in the Context of Their Integration into the EHEA. “Education in the 21st Century” 1(3), Yerevan, 2020, p. 22.

4. Armenian State University of Economics, Artsakh State University, Higher Education: Problems and Perspectives: Materials of the Seminar, Yerevan, Tntesaget publishing house, 2017.

5. Decision on approval of the RA Government program (08.02.2019), N65 – A, https://www.gov.am/files/docs/3133.pdf.

6. Report on the Process and Results of the Implementation of RA Government Program for 2019, 2020, p. 22, https://www.gov.am/files/docs/3932.pdf.

7. National Center for Professional Education Quality Assurance. System problems of Armenian HEIs: Comparative Analysis of the Expert-panel reports of Accredited Higher Education Institutions, Yerevan, 2018.
8. National Center for Professional Education Quality Assurance. Accreditation Manual. Yerevan, 2015, p. 28.
9. National Center for Professional Education Quality Assurance. Guidelines, Criteria and Standards for Quality Assurance in the Armenian Tertiary Education (Working Papers), Yerevan, 2010, p. 22.
10. European Association for Quality Assurance in Higher Education. ENQA Report on Standards and Guidelines for Quality Assurance in the European Higher Education Area. Helsinki, 3rd edition, 2009.
11. European University Association. Graz Declaration 2003 Forward from Berlin: the Role of the Universities, 2003, p. 9.
12. Making the Most of Our Potential: Consolidating the European Higher Education Area: Bucharest Communiqué, 2012.
13. United Nations Educational, Scientific and Cultural Organization (UNESCO). Quality Assurance and Accreditation: A Glossary of Basic Terms and Definitions. 1st edit. Bucharest, 2007, p. 89.
14. Standards and Guidelines for Quality Assurance in the European Higher Education Area (ESG), Belgium, 2015.
15. Butakova M., Sokolova O., Kuznetsova O., Management in Professional Education Organizations: Manual. Moscow, KnoRus, 2019, p. 81.

Материал был представлен и отправлен на рецензию: 22.09.2020
Принято к публикации: 02.10.2020
Рецензент: канд. пед. наук, доцент Арменуи Ашикян

The material was submitted and sent to review: 22.09.2020
Was accepted for publication: 02.10.2020
Reviewer: Assoc. Prof., PhD Armenuhi Ashikyan

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ

Հակոբյան Արմեն
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտ, Հայաստան

Համառոտ ներածական: Ներկայումս մարդու առողջության պահպանման, վերականգնման և ամրապնդման հիմնախնդիրները, լինելով բազմակողմանի, բավականին բարդ ու կարևոր ժամանակաշրջանում դարձել են առավել հրատապ, արդիական և գտնվում են տարբեր մասնագետների, այդ թվում՝ նաև ֆիզիկական կուլտուրայի ոլորտի ուշադրության կենտրոնում: